ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-302-10.04.2018-ՊԻՄԻ-011/0, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի Կ-302[1]-10.04.2018-ՊԻՄԻ-011/0, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-302[2]-10.04.2018-ՊԻՄԻ-011/0 և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-302[3]-10.04.2018-ՊԻՄԻ-011/0 Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ նախագիծ	Առաջարկվում է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու փոխարեն ընդունել «Տեղաական հանրաքվեի մասին» նոր օրենք՝ ուժը կորցրած ճանաչելով գործող օրենքը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
2.	**Ազգային ժողովի պատգամավոր Ռուստամ Մախմուդյան**	««Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ նախագիծ	Առաջարկվում է նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերի հրապարակման վերաբերյալ կարգավորումները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**